ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2021թ. թիվ 89-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հաշվի առնելով քաղաքացիների դիմումները և զեկուցագրերը ՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից աջակցության նպատակով հինգ քաղաքացու հատկացնել 140000 /մեկ հարյուր քառասուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2/18/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. փետրվարի 18
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2021թ. փետրվարի 18-ի
թիվ 89-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Ազգանուն, Անուն	Բնակավայր	Գումարը
1	Խաչատրյան Սիրվարդ	ք. Վանաձոր	15000
2	Բաղոյան Արամ	ք. Վանաձոր	15000
3	Թորոսյան Թամարա	գ. Դարպաս	20000
4	Օհանյան Արմեն	ք. Վանաձոր	50000
5	Գաբրիելյան Անի	«Լուսաստղ» ԲՀԿ նախագահ	40000
	Ընդամենը		**140000**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

18/02/2021

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ